ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության տեսչական մարմնի խորհրդի նիստ

ք. Երևան 16 հունվարի 2018թ.

ՀՀ ԿԳՆ-ում կայացավ ՀՀ ԿԳՆ ԿՏՄ խորհրդի հերթական նիստը:

Մասնակցում էին՝

Լ. Մկրտչյան՝ ՀՀ կրթության և գիտության նախարար (խորհրդի նախագահ)
Է. Տարասյան՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
Ա. Գալստյան՝ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար
Հ. Այվազյան՝ ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխման խմբի ղեկավար
Թ. Ավագյան ՝ «Դասավանդի՛ր Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրի գլխավոր տնօրեն (համաձայնությամբ)
Ա. Բախշյան՝ «Հանրային դիվանագիտություն» ՀԿ-ի նախագահի կրթության հարցերով խորհրդական (համաձայնությամբ)
Ս. Ալոյան՝ «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ (համաձայնությամբ)

Բացակա էին՝

Գ. Գևորգյան՝ ՀՀ ֆինանսների նախարարի օգնական
Ա. Գյումիշյան՝ «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի փոխտնօրեն (համաձայնությամբ)

Հրավիրված էին՝

Տ. Հակոբյանը՝ ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխման խմբի փորձագետ
Ն. Սաղաթելյանը՝ ՀՀ ԿԳՆ ԿՏՄ ղեկավարի թեկնածու
Ա. Ավագյանը՝ ՀՀ ԿԳՆ ԿՏՄ ղեկավարի թեկնածու

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ ԿԳՆ ԿՏՄ ղեկավարի տեղակալների թեկնածությունների քննարկում և հաստատում:
2. Այլ հարցեր:

Զեկուցող՝ Ա. Շագաֆյան

Խորհրդի նիստը բացեց խորհրդի նախագահ Լ. Մկրտչյանը և առաջարկեց ՀՀ ԿԳՆ ԿՏՄ ղեկավար Ա. Շագաֆյանին ներկայացնել օրակարգային հարցերը: Ա. Շագաֆյանը խորհրդին զեկուցեց, որ, ըստ ՀՀ ԿԳՆ ԿՏՄ կանոնադրության, տեսչական մարմինը պետք է ունենա ղեկավարի երկու տեղակալ: Ա. Շագաֆյանը ՀՀ ԿԳՆ ԿՏՄ ղեկավարի տեղակալների թեկնածուներ առաջադրեց Նաիրի Սաղաթելյանին՝ ՀՀ ԿԳՆ կրթության պետական տեսչության պետի նախկին տեղակալին, և Արթուր Ավագյանին՝ Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի պրոռեկտորին:

Ա.Շագաֆյանն ավելացրեց, որ ներկայացված թեկնածուների հաստատման պարագայում, տեղակալներից մեկը, բացի իրեն ամրագրված բովանդակալից դաշտը վերահսկելուց, կզբաղվի նաև ներքին կառավարման հարցերով: Մյուս տեղակալը՝ բովանդակայինը կհամատեղի զարգացման հարցերի հետ:

Ա. Բախշյանը հետաքրքրվեց, թե մասնագիտական ինչ կարողություններ և ինչ արժանիքներ են հաշվի առնվել ներկայացված թեկնածուների ընտրության հարցում: Ա. Բախշյանին հետաքրքրում էր նաև, թե ներկայացված թեկնածուները համակարգային ինչ փորձառություն ունեն, հանրակրթությանը ինչքանով են տիրապետում, հակակոռուպցիոն ինչ մոտեցումներ ունեն:

Ա. Շագաֆյանը պատասխանեց, որ հակակոռուպցիոն և մնացած այլ շեշտադրումները կներառվեն մոտակա օրերին կազմվելիք աշխատանքային ծրագրում: Թեկնածուների ընտրության հարցում, մասնավորապես, հաշվի են առնվել Ն. Սաղաթելյանի աշխատանքային փորձը ՀՀ կրթության պետական տեսչությունում, ինչպես նաև տեսչական գործընթացին և կրթության ոլորտի անցուդարձին տիրապետելը: Ա. Ավագյանի պարագայում էլ հաշվի են առնվել վերջինիս կառավարչական փորձառությունը կրթության համակարգի տարբեր կառույցներում, ինչպես նաև

զարգացման տարբեր ծրագրերի հետ կապված փորձը: Նոր ստեղծվող տեսչական մարմինը նոր պահանջներ և մոտեցումներ է դնելու աշխատակազմի առաջ, և այն մարդիկ, որոնք համաձայն են աշխատել այդ պահանջների ներքո, պետք է պատրաստ լինեն անել առավելագույնը:

Ա. Բախշյանին հետքրքրեց, թե որոնք են թեկնածուների նոր պահանջներն ու մոտեցումները:

Ա. Շագաֆյանը պատասխանեց, որ հիմանական մոտեցումն այն է, որ տեսչական մարմինը գործելու է առավելապես որպես ուսումնական հաստատություններին, մեթոդական և բովանդակային իմաստով աջակցող մարմին, և այդ գործընթացը պետք է իրականացվի առավելագույնս բարեխիղճ ու թափանցիկ:

Ա. Բախշյանին հետաքրքրեց Ն. Սաղաթելյանի կողմից նախորդ տարվա օգոստոսին աշխատանքային ծրագրով նախատեսված ՀՀ Արմավիրի մարզի դպրոցների ստուգումը չեղյալ անելու պատճառը, երբ վերջինս փոխարինում էր արձակուրդում գտնվող տեսչության պետին:

Ն. Սաղաթելյանը պատասխանեց, որ հուլիս ամսին մարզի դպրոցներում աշխատանքային ծրագրով ուսումնասիրություններ նախատեսված չեն եղել: Մարզի համայնքների համայնքապետարաններում տեսչության կողմից ուսումնասիրվել են ավագանու կողմից առանձին երեխաներին տրված խնամակալության մասին այն որոշումների հիմքերը, որոնք հետագայում հնարավորություն են տվել նրանց մարզի հանրակրթական դպրոցներում շարունակել կրթություն ստանալ օտար լեզվով: Հուլիսին նախատեսված գործընթացը հետաձգվել էր տեսչության աշխատակազմի մեծ մասի արձակուրդում գտնվելու պատճառով: Այն իրականացվել է դեկտեմբեր ամսին:

Ա. Բախշյանը հետաքրքրվեց նաև, թե Ա. Ավագյանն ինչքանով է պատկերացնում դպրոցը և ծանոթ է արդյոք նախնական և միջին մասնագիտական ոլորտի ստորաբաժանման գործող շատ կարգերին և իրավական ակտերին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա ֆինանսատնտեսական հարցերով ԲՈՒՀ-ի պրոռեկտոր է և աշխատել է ԿԳՆ ծրագրերի իրականացման գրասենյակի տարբեր ծրագրերում:

Ա. Ավագյանը նշեց, որ միանշանակ չի կարող ասել, որ բոլոր իրավական ակտերին ծանոթ է, սակայն աշխատանքի ընթացքում կփորձի արագ ծանոթանալ, ինչին կնպաստի արդեն

նշված ակադեմիական, ինչպես նաև ծրագրերի իրականացման ոլորտներում աշխատանքային մեծ փորձը:

Ա. Բախշյանին հետաքրքրեց, թե Ա. Ավագյանը կոնկրետ, որ ծրագրի մեջ է ընդգրկված եղել:

Ա. Ավագյանը պատասխանեց, որ սկզբում ընդգրկվել է նախադպրոցական ծրագրում՝ մարզերի նախակրթարանների և աշխատել է բոլոր մարզերի կրթության վարչությունների հետ, ինչի արդյունքում պատկերացնում է աշխատանքը:

Ա. Բախշյանը հետաքրքրվեց նաև, թե որքանով է Ա. Ավագյանը նպաստել գյուղական համայնքներում մանկապարտեզների փակմանը, որպեզի այդ ծրագրով դպրոցին կից ստեղծվեն նախակրթարաններ:

Ա. Ավագյանը նշեց, որ ծրագրերն իրականացվել են հիմնականում այն համայնքներում, որտեղ չեն եղել գործող ո՛չ մանկապարտեզներ, ո՛չ նախակրթարաններ:

Հ. Այվայզյանն առաջարկեց Ն. Սաղաթելյանին նշել երեք խնդիր, որոնք մինչ ներկա պահը առկա են տեսչությունում կամ ոլորտում և ներկայացնել դրանց լուծումները՝ հաշվի առնելով նրա՝ տեսչությունում աշխատելու հանգամանքը:

Ն. Սաղաթելյանը որպես ոլորտի լուրջ խնդիր նշեց դպրոցներում դրամահավաքը (դիմում-բողոքների մոտ 90%-ը), որի դեմ պայքարում են, բայց վերջնական լուծումը դեռևս չունեն, քանի որ դրամահավաքը, որպես կանոն, նախաձեռնում է ծնողկոմիտեն, սակայն բողոքում են առանձին ծնողներ և դժվար է լինում հաստատել, որ դրամահավաքը իրականացվում է որևէ մեկի հրահանգով:

Ա. Բախշյանը հետաքրքրվեց ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղի դպրոցի կառավարման խորհրդի հինգ անդամի (գյուղապետի գլխավորությամբ) գյուղապետարանի աշխատակիցներ լինելու փաստով:

Ն. Սաղաթելյանը տեղեկացրեց, որ Վաղաշենի դպրոցի ուսումնասիրությանը չի մասնակցել:

Հ. Այվազյանին հետաքրքրեց, թե նման և այլ բազմաթիվ խնդիրները ինչպես են լուծվելու:

Ա. Շագաֆյանը պատասխանեց, որ տեսչական մարմինն իր կարգավիճակով ներկայումս շատ ավելի շահեկան վիճակում է գտնվում, քան Կրթության պետական տեսչությունը նախկինում, և որ այդ առավելությունը վստահաբար կօգտագործվի, իսկ իրավական դաշտի անկատարության հետ կապված խնդիրներ առաջանալու դեպքում, մարմինն այդ մասին կբարձրաձայնի և կառաջարկի համապատասխան լուծումներ:

Է. Տարասյանը Ա. Շագաֆյանին առաջարկեց առաջիկայում ինֆորմացիա ներկայացնել այն մասին, թե անցած տարիներից մինչ այժմ տեսուչներն ինչ խնդիրներ են առանձնացրել, որոնց խորհուրդը կփորձի տալ լուծման առաջարկներ, իսկ պարոն Շագաֆյանը կներկայացնի վերջնական արդյունքները:

Լ. Մկրտչյանը նշեց, որ բացի մասնագիտական ասպեկտից, իր համար շատ կարևոր է նաև թեկնածուների բարոյական նկարագիրը, մասնավորապես հայրենիքի առաջ զինվորական ծառայության պարտքի կատարումը, երիտասարդ տարիքում քաղաքացիական ակտիվության ցուցաբերումը, ուսանողական շարժումներում ընդգրկվածությունը:

Ա. Շագաֆյանն առաջարկեց, հարցերի սպառված լինելու պարագայում, քննարկումը շարունակել առանց թեկնածուների ներկայության: Քննարկումն ավարտվեց և խորհրդի նախագահ Լ. Մկրտչյանն առաջարկեց անցնել քվեարկության:

Քվեարկության դրվեց Նաիրի Սաղաթելյանի թեկնածությունը: Խորհուրդը վեց կողմ և մեկ դեմ ձայնով հավանության արժանացրեց Նաիրի Սաղաթելյանի ՀՀ ԿԳՆ ԿՏՄ ղեկավարի տեղակալի թեկնածության հաստատումը: Դեմ քվեարկեց Ա.Բախշյանը: Այնուհետև քվեարկության դրվեց Արթուր Ավագյանի թեկնածությունը: Խորհուրդը վեց կողմ և մեկ դեմ ձայնով հանավության արժանացրեց Արթուր Ավագյանի ՀՀ ԿԳՆ ԿՏՄ ղեկավարի տեղակալի թեկնածության հաստատումը: Դեմ քվեարկեց Ա.Բախշյանը:

Օրակարգային այլ հարցերի ներքո Ա.Շագաֆյանը տեղեկացրեց խորհրդին, որ Արամ Գյումիշյանը («Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի փոխտնօրեն, խորհրդի անդամ) դիմել է խորհրդին իր լիազորությունների դադարեցման խնդրանքով, քանի որ մեկնում է արտերկիր ուսումնառության նպատակով: Ա.Շագաֆյանը տեղեկացրեց նաև, որ «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը պատրաստ է Արամ Գյումիշյանին փոխարինել այլ ներկայացուցիչով:

Հ. Այվայզյանը պարզաբանեց, որ խորհրդի առաջին կազմը, ըստ օրենքի, կառավարության աշխատակազմն է ձևավորում, ընթացքն ապահովում է, հետո արդեն քարտուղարությունը պետք է անի: «Թումոյից» դրա վերաբերյալ պետք է նամակ լինի, տեսչական մարմինը պետք է ներկայացնի առաջարկ խորհրդին, վերջինս այն փոխանցի կառավարությանը և ի վերջո վարչապետի որոշումով անունը փոխվի:

Ա. Շագաֆյանը տեղեկացրեց նաև, որ տեսչական մարմինը սկսել է աշխատել ստուգաթերթերի և ռիսկի գնահատման չափանիշների վերանայման ուղղությամբ: Մինչև սույն թվականի փետրվարի վերջ նախատեսվում է խորհրդի քննարկմանը ներկայացնել վերանայված ստուգաթերթերը, ռիսկի գնահատման լրամշակված մեթոդաբանությունն ու 2018 թվականի աշխատանքայի ծրագրի նախագիծը:

Խորհուրդը որոշեց

1. Հավանություն տալ Ն. Սաղաթելյանի թեկնածությանը ՀՀ ԿԳՆ ԿՏՄ ղեկավարի տեղակալի պաշտոնում:
2. Հավանություն տալ Ա. Ավագյանի թեկնածությանը ՀՀ ԿԳՆ ԿՏՄ ղեկավարի տեղակալի պաշտոնում:
3. Ի գիտություն ընդունել Արամ Գյումիշյանի՝ խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման մասին հաղորդումը և հարձնարարել տեսչական մարմնին, սահմանված կարգով, ներկայացնել խորհրդի անդամի նոր թեկնածու:

ՀՀ կրթության և գիտության նախարար,

խորհրդի նախագահ **Լ. Մկրտչյան**

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ,

խորհրդի անդամ **Է. Տարասյան**

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար, խորհրդի անդամ

Ա. Գալստյան

ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխմանխմբի ղեկավար, խորհրդի անդամ

Հ. Այվազյան

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրիգլխավոր տնօրեն, խորհրդի անդամ

Թ. Ավագյան

«Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ,
խորհրդի անդամ

Ս. Ալոյան

«Հանրային դիվանագիտություն» ՀԿ-ի նախագահի կրթությանհարցերով խորհրդական, խորհրդի անդամ

Ա. Բախշյան